

создает свою сказку, которая одновременно является проявлением стремлений разных поколений. Будущее человечества будет продолжением прерванной сказки.

## THE SIGNIFICANCE OF THE MYTH IN ABIK AVAGYAN'S STORIES

*B. G. GHARIBYAN*

The article presents the novels of Abik Avagjan representing Soviet Armenian life. In it the author shows the hero who is a suffer of reality, whose sole is not known the day life problems. The existence to mean, existancee to justify, into a reality enters tragedy. A man creates his tale, which is at the same time the expression of seeking of different genders. The future of humanity is not the unideal future. Dut is the existence of the stopped and still going on of the tale.

## ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ «ՄԻՐԻԱԿ» ՊԱՏՄԱԿԱԾՔԻ ԵՎ ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ «ԱՅՍ ԿԱՆԱՀ-ԿԱՐՄԻՐ ԱՇԽԱՐՀԸ» ԿԻՆՈՎԻՊԱԿԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

**Հ. Է. ՄԿՐՏՉՅԱՆ**

*Գղձ բանասիրական ֆակուլտետի  
Հայոց լեզու և գրականություն բաժնի  
մագիստրատուրայի շրջանավարտ,  
Գղձ Հանրության հետ կապերի  
և լրատվության բաժնի մասնագետ*

Գրականությունն անվերջանալի մայրուղի է, որի խաչմերուկներում հատվում են ոչ միայն իրականությունն ու հորինվածքը, կյանքն ու երազայինը, այլև հանդիպում են այդ գրականության կարկառուն ներկայացուցիչները՝ գրողները:

Այդպիսի խաչմերուկներից մեկում էլ «հանդիպեցին» հայ արձակի երկու վարպետները՝ Ակսել Բակունցն ու Հրանտ Մաթևոսյանը: Այս դեպքում ևս առիթը նրանց ստեղծագործություններն էին՝ համապատասխանաբար «Միրիակ» պատմվածքը և «Այս կանաչ-կարմիր աշխարհը» կինովիպակը:

Ակսել Բակունցի «Միրիակ» պատմվածքը գրվել է 1926-1932թթ., որի թեմայով էլ 1966թ.-ին Մաթևոսյանը գրել է իր «Այս կանաչ-կարմիր աշխարհը» կինովիպակը: Այստեղ պետք է շեշտել այն հանգամանքը, որ Մաթևոսյանն իր ստեղծագործությունը գրել է ոչ թե Բակունցի պատմվածքի հիման վրա, ոչ թե վերցնելով ու վերաշարադրելով եղածը, այլ նոր մոտեցմամբ է մեկնաբանել այն՝ պատմվածքի հիմքում ընկած գաղափարները վերցնելով ու փոխադրելով նոր հարթություն: Կինովիպակը գրելիս Մաթևոսյանը ծանոթացել է նաև թեմային հարող այլ նյութերի հետ: «Սրանք, մեկ էլ Բակունցի «Միրիակը» չգիտեմ իրարու ինչպես

ագուցվեցին իմ մեջ և զգացի, որ կինոյում մի լավ բան է առաջանում: Ինձանից վերացած՝ գրեցի այդ 45 էջանոց գործը, առանց Բակունցի գրվածքը բացելու»<sup>1</sup>:

Հետաքրքիր է, որ երկու հեղինակների մոտ էլ ստեղծագործության սյուժեն, իհարկե, որոշակի տարբերություններով, նույնն է, կամ լավագույն դեպքում՝ նման: Նույնն են նաև հերոսները, բայց և այնպես տարբեր են ստեղծագործությունների վերնագրերը. մի դեպքում՝ «Միրիադ», մյուս դեպքում՝ «Այս կանաչ-կարմիր աշխարհը»:

Բակունցի մոտ ստեղծագործությունը վերնագրված է «Միրիադ» այն պատճառով, որ հեղինակն իր երկի հիմքում դրել է կոնկրետ մի պատմություն՝ Սոնայի և Դիլան դայու սիրո պատմությունը՝ դրանում ամփոփված իրադարձությունները զուգահեռելով բնությանը, մասնավորապես, Սոնային համեմատելով միրիադի հետ: Իրադարձությունների ծավալման ողջ ընթացքում մշտապես առկա է Սոնա-միրիադ զուգահեռը:

Միջդեռ Մաթևոսյանը Բակունցի անձնական զգացմունքների աշխարհը սինթեզել է ընդհանուր կյանքի մեջ՝ հերոսների հետ կատարված դիտարկելով ամբողջ աշխարհի, ընդհանուր կյանքի լուսի ներքո: Այստեղ սերը խառնվում է ընդհանուր կեցությանը, աշխարհի փիլիսոփայությանը, և իրադարձությունները մեկնաբանվում են աշխարհի դիտանկյունից:

Իսկ ինչ վերաբերում է այդ աշխարհի «կանաչ-կարմիր» բնորոշմանը, կարծում ենք, որ հեղինակի մոտ այն ասոցացվում է կյանքի երիտասարդության և հասունության հետ, այսինքն՝ այստեղ առկա է կյանքի հարափոփոխության, հարահոսության գաղափարը, այն մշտապես ընթացքի մեջ է, մշտապես շարժվում է առաջ և երբեք կանգ չի առնում:

Երկու հեղինակների մոտ էլ գրվածքներն սկսվում են իր մայրամուտին հասած բնության, մասնավորապես ուշ աշման պատկերմամբ: Բնության մեջ հերթափոխ է. աշունն իր տեղը զիջում էր ցրտաշունչ ու խիստ ձմռանը: Սակայն եթե համեմատում ենք այդ տեսարանները Բակունցի և Մաթևոսյանի մոտ, ականհայտ է դառնում, որ Բակունցի մոտ աշունը մի տեսակ տխուր է, այն իրոք ինչ-որ բանի ավարտ է խորհրդանշում, արևն այլևս այնպես ջերմ չի տաքացնում, դառնաշունչ քամիներ են փչում, իսկ տոթ ու շիկացած օդն այլևս սառել է. «Աշուն էր, տերևաթափով, արևի նվազ ջերմությամբ, դառնաշունչ քամիով, որ ծառերի ճղներից պոկում էր դեղնած տերևները, խմբերով քշում, տանում հեռու ձորերը: Նույնիսկ քարափի հաստաբուն կաղնին խոնարհվում էր քամու առաջ: Ամայի ձորերում, դեղնակարմիր անտառի և հնձած արտերի վրա իջել էր մի պայծառ տխրություն: Ջինջ օդի սառնության մեջ զգացվում էր առաջին ծյունի շունչը»<sup>2</sup>:

Մինչդեռ Մաթևոսյանի մոտ աշունը պայծառ է: Մաթևոսյանի նկարագրած թեև պաղ, բայց պայծառ այգում կյանքի բնականոն ընթացք կա, նկարագրվող երևույթները հենց կյանքի դրվագներ են հիշեցնում, ցույց է տրվում եղանակին համապատասխան կատարված աշխատանք՝ «ծխում են խաշամի կույտերը», իսկ «մի ծիտ գտել է իր վերջին խնձորը և կտցահարում է հրճվանքից իրեն կորցրած»<sup>3</sup>:

<sup>1</sup> *Մաթևոսյան Հրանտ*, Ես ես եմ, Երևան, 2005, էջ 296:

<sup>2</sup> *Բակունց Ակսել*, Երկեր, Երևան, 1986, էջ 72-73:

<sup>3</sup> *Մաթևոսյան Հրանտ*, Տերը: Կինովիպակներ, Երևան, 1983, էջ 4:

Երկու ստեղծագործությունների մեջ էլ հատկանշական են սիմիոդրի չորացած տերևների՝ «թեթև քամուց թիթեղաձայն խշրտալը» և վերջին արևածաղկի տեսարանները: Մինչդեռ այստեղ մի բայց կա. ճիշտ է, երկու հեղինակներն էլ խոսում են վերջին արևածաղկի մասին, բայց Մաթևոսյանը մեկ քայլ առաջ է գնում այս նկարագրության մեջ. արևածաղիկը ոչ միայն վերջինն էր, այլ նաև ուշացած, այսինքն՝ տվյալ ժամանակին այլևս անհամապատասխան, անտեղի, այլևս իրեն բնության կողմից տրված դերակատարությունը չիրականացնող:

Երկու ստեղծագործությունների գլխավոր հերոսը Դիլան դային է, ստեղծագործության հիմքում՝ նրա վերհուշը սիրած աղջկա՝ Սոնայի մասին: Երկու հեղինակների մոտ էլ բնությունն է դառնում վերհուշի պատճառ. Մաթևոսյանի մոտ մի վերջին խնձոր գտած ծառի ծվծոցը, ծառի ճյուղի՝ հերոսի ծոծրակին քսվելը հիշեցնում են դեռևս երեխա ժամանակները, երբ ծերունին այն ժամանակ ընդամենը յոթ-ութ տարեկան տղա էր:

Դիլանին շրջապատող բնության ամեն մի շյուղը՝ սիմիոդրի տերևների խշրոցը, վազերի օրորը, հնձանի դռնակի երգը, ծերունու հիշողության մեջ արթնացնում են անցյալից մի հուշ, երբ Սոնան գաղտագողի գալիս է հնձան. «...մի ջահել կին դուրս եկավ սիմիոդրի խիտ արտից: Դուրս եկավ, ճոճեց բարակ մարմինը, որպես եղեգ և կաքավի մանր քայլերով սուրաց դեպի հնձանը»<sup>4</sup>:

Բակունցի Սոնան ինքն է գալիս ընդառաջ իր սիրուն՝ դեմ գնալով ժամանակի պահանջներին ու բարոյականության սահմանված խիստ չափանիշներին: Սոնան վախենում էր, որ որևէ մեկը կարող է մտնել հնձան և նրանց միասին տեսնել, բայց և այնպես նա հաղթահարում է իր վախն ու ամոթը և մտնում հնձան:

Մինչդեռ մաթևոսյանական Սոնան այդքան էլ հաստատական չէ: Նա տարակուսանքի մեջ է: Սոնան «գալիս-գալիս և կանգ է առնում, գալիս է արագ ու զգույշ և կանգ է առնում»<sup>5</sup>: Մաթևոսյանի հերոսուհին տատանվում է, նա չի կողմնորոշվում՝ գալ ընդառաջ Դիլանին, թե շուտափույթ հեռանալ, նա միաժամանակ և՛ դանդաղում է, և՛ շտապում: Այստեղ ամբողջ խնդիրն այն է, որ Սոնայի ներաշխարհում հակամիտվում են բանականն ու զգացմունքայինը, բանականություն, որի հիմքում ընկած են տիրող հասարակարգի պահանջները, և զգացմունք, որն ընտրելը կնշանակեր անձնական, կանացի երջանկություն: Այդուհանդերձ, կյանքի, ժամանակաշրջանի պահանջն ավելի զորեղ է գտնվում, քան անձի ցանկությունը: Եվ Սոնային մնում էր միայն ենթարկվել և կամա թե ակամա տրվել կյանքի ամենակուլ հոսանքին: Այդպիսով՝ Մաթևոսյանի Սոնան այդպես էլ չի մոտենում Դիլանին, այլ հեռանում է:

Ի տարբերություն Բակունցի՝ Մաթևոսյանի մոտ աշխատանքը սյուժետիկ առումով շատ հագեցած է ստացվել, հեղինակը ամենայն մանրամասնությամբ շարադրել է դեպքերը: Բավականին դիպուկ և պատկերավոր է նկարագրված այն տեսարանը, թե ինչպես է Դիլանն ընդունում Սոնայի ամուսնության լուրը, Սոնայի հարսանիքը, թե ինչպիսի հոգեվիճակի մեջ է ընկնում հերոսը կրած կորստի պատճառով: Բայց գիշերը լուսանում է, և ամեն ինչ նույնն է. «Պատը պատ էր, վազերը վազեր էին, այգուն հասակ էին քաշում սիմիոդրի շարքերը, իսկ վազերը

<sup>4</sup> Նշվ. աշխատ., էջ 73-74:

<sup>5</sup> *Մաթևոսյան Ջրանտ*, նշվ. աշխատ., էջ 5:

ծարավ էին և տակները ճաքճաքած»<sup>6</sup>:

Ե՛վ Բակունցը, և՛ Մաթևոսյանն այսպիսով հանգում են այն մտքին, որ հերոսի համար որքան էլ ծանր և այլևս անտանելի լինի կորուստը, ցավը, և եթե մույնիսկ նրան թվա, թե դրանով կյանքը կանգ է առել, միևնույն է, կյանքը շարունակում է իր հարահոս ընթացքը: Սակայն անգամ ամիսներ հետո մի ներքին մղումով Դիլանին ձգում էր դեպի Սոնան, որը, սակայն, «խոր երկնքում ճախրող թռչուն էր, որ երբեք չէր իջնում նրա շենքին»<sup>7</sup>:

Յեղիմակներն անընդհատ ընթերցողին ներկայացնում են Դիլանի և Սոնայի պարբերական միամիտ հանդիպումներն արտում, ջուր բերելիս, տան բակն ավելելիս, և թե ինչպիսի խորը ցավ ու ողբերգություն են ապրում երկուսն էլ, նրանք լուռ տառապում էին, քանի որ «զգում էին մեկը մյուսի քայլերը և շունչը և սրտի տրոփը»<sup>8</sup>:

Յերթական հանդիպումից հերոսի հոգում կրկին ամեն ինչ խառնվում է իրար: Յերոսը կրկին հանգստություն է որոնում բնության գրկում: Բնության զարդերից մեկը՝ միրիավն է կռնչելով կանչում իր գիրկը: Սակայն բնության գրկում էլ վերհուշը հանգիստ չի տալիս հերոսին: Ե՛վ մասրենու «պառավ» թուփը, և՛ արտը, և՛ տափակ քարը, ամեն ինչ Սոնային էին հիշեցնում, թե ինչ հրաշալի և անհոգ օրեր են նրանք միասին անցկացրել: «Ահա մասրենու թուփը, որ ծաղկել էր մեկ հատիկ սպիտակ ծաղիկ և արար աշխարհի չորության մեջ դա միակ ծաղիկն էր, և Դիլան ու Սոնա երեխաները հեռվից վազելով եկան պոկելու և չէին կարողանում պոկել, որովհետև փշոտ մասրենին թույլ չէր տալիս, մոտ չէր թողնում, և իրենք երկար, շատ երկար պտտվում էին մասրենու շուրջը և այդպես էլ չպոկեցին, որովհետև, երբ Դիլանը ճյուղի կտորով քաշեց ու ահա պիտի պոկեր Սոնայի համար՝ ծաղիկ ծաղկած ճյուղը դուրս պոծավ ու թերթաթափվեց»<sup>9</sup>:

Բավականին խորհրդանշական են մեջբերված հատվածի տողերն այն առումով, որ այդ մասրենու միակ սպիտակ ծաղիկը Սոնայի ու Դիլանի անաղարտ ու մաքուր սերն է, որը բուսնել է արար աշխարհի չորության մեջ: Սիրահարներն ուզում էին պոկել այդ ծաղիկը, ուզում էին վայելել, իրենցը դարձնել այդ անբիծ գեղեցկությունը, բայց մասրենին շատ էր փշոտ, իսկ մասրենու թուփը ծաղիկը շրջապատող փշոտ կյանքն ասես լիներ, որը լի է փորձություններով ու արգելքներով, և դրանք խանգարում են մարդկանց հասնելու իրենց նվիրական երազանքին, ձեռք բերելու իրենց սրտի ուզածը: Սոնան ու Դիլանը երկար են պտտվում ծաղկի շուրջը, բայց անգամ մեծ ջանքերի գնով չեն կարողանում պոկել այն: Իսկ երբ Դիլանին թվում է, թե ուր որ է կպոկի ծաղիկը, այն պարզապես դուրս է պոծնում ու թերթաթափվում: Այսինքն՝ զույգի ծաղիկ-սերը վաղաժամ «վախճանվում է»:

Դիլանը Մաթևոսյանի, ինչպես նաև Բակունցի մոտ հանդիպում է թռչունների (Բակունցի մոտ՝ կաքավ, Մաթևոսյանի մոտ՝ լոր) խմբի, ցանկանում նրանցից մեկին նշան բռնել և կրակել, սակայն չի հաջողվում: Երկար քայլում է Դիլանը

<sup>6</sup> *Մաթևոսյան Ջրանտ*, Եզվ. աշխատ., էջ 15-16:

<sup>7</sup> *Բակունց Ակսել*, Եզվ. աշխատ., էջ 75:

<sup>8</sup> *Մաթևոսյան Ջրանտ*, Եզվ. աշխատ., էջ 18:

<sup>9</sup> *Մաթևոսյան Ջրանտ*, Եզվ. աշխատ., էջ 21:

փշոտ ու մացառուտ կածանով, մինչև հասնում է այնտեղ, որտեղ հավաքվում էին «մթին անտառների ոսկեփետուր թռչունները»՝ միրհավները: Նա առանց երկար-բարակ մտածելու կրակ է արծակում: Գնդակը դիպչում է թռչուններից մեկին, սակայն երբ Դիլանը ձեռքը երկարում է վիրավոր թռչունին բռնելու, վերջինս վեր է թռչում և անհետանում երկնային անսահմանության մեջ:

Ահա այստեղ խորհրդավոր կերպով զուգահեռվում են Դիլանի կյանքի պատմությունը և միրհավի՝ հենց Դիլանի գնդակից վիրավորվելու հանգամանքը: Այս տեսարանն ինքնին խորհրդանշական է այն առումով, որ հեղինակը պատմում է առաջին հայացքից աննշան թվացող մի դիպվածի մասին, մինչդեռ ասվածի ենթատեքստն իրենից ավելին է ենթադրում. ընդամենը մի քանի տողով Բակունցն ամփոփում է Դիլան դայու կյանքի պատմությունը՝ համեմատական զուգահեռներ անցկացնելով այդ պատմության դրվագների և միրհավին կրակելու, վերջինիս վիրավորելու, ապա թե՛ սպիտակ շան բերանից, թե՛ Դիլանի ձեռքից այդպես վիրավոր դուրս արձնելու և, վերջապես, իր հետևից ընդամենը երկու արնոտ փետուր թողնելու միջև:

Այստեղ «մթին անտառների ոսկեփետուր թռչունը»՝ միրհավը, խորհրդանշում է Սոնային, ով վիրավորվում է Դիլանի սիրո գնդակից, բայց և հայտնվում է սպիտակ շունը՝ Սոնայի ամուսնու խորհրդանիշը, որը ևս պայքարում էր Սոնային տիրելու համար, սակայն հերոսուհին այդպես էլ ոչ ոքի բաժին չի հասնում, այլ թռչում, գնում է՝ իր հետևից թողնելով միայն երկու փետուր: «Միրհավը թռել էր հեռու... Մամռոտ քարի վրա երկու փետուր էր ընկած, դեղնագույն-սև պուտեռով, իսկ թփի չոր ճյուղերին՝ արյան կաթիլներ»<sup>10</sup>:

Երբեմն երազ էր թվում միրհավ-Սոնան, սակայն անտառապահի հասցրած «մտրակի տեղերը մրմնջում էին, աչքի տակ ցավ էր զգում, ոտքերը դողում էին»<sup>11</sup>, դառն իրականությունը ոչ մի դեպքում նրան թույլ չէր տա հավատալու այդ երազին, զգալու նրա իսկությունը: Դիլանը «սեղմել էր հրացանի տաք փողը, ինչպես միրհավի մարմինը, որին միայն մեկ վայրկյան շոշափեց և մատների ծայրով զգաց, որ բմբուլը փափուկ է: Միրհավի մարմինը՝ տաք բմբուլ, ինչպես Սոնայի մարմինը լաջվարդ շապիկի մեջ»<sup>12</sup>: Բայց և այնպես հերոսը չի դադարում երազելուց. «Լիներ, այնպես լիներ, որ ինքը հնձվոր լիներ, նրանց արտը հնձեր, Սոնան հաց բերեր իրեն, շապիկը քրտներ և քրտնած նստեր կողքին»<sup>13</sup>:

Ինչևէ, կյանքը դրանով կանգ չէր առնելու, այն շարունակելու էր իր բնականոն ընթացքը:

Դիլանը կրկին իր գործով էր զբաղված, բայց նա նույն հաճույքով ու նույն ոգևորությամբ չէր անում այն, ինչ միշտ արել էր. «Այդ օրը նա քարե տաշտում ավելի զայրացած էր ճմլում սև խաղողը և չէր զգում, թե ինչպես քրտինքը գլորվում էր ճակատից, կաթում պղտոր գինու մեջ...»<sup>14</sup>:

Ի տարբերություն Բակունցի պատմվածքի՝ Մաթևոսյանի վիպակում միրհավի

<sup>10</sup> **Բակունց Ակսել**, նշվ. աշխատ., էջ 79:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 79:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 79:

<sup>13</sup> **Բակունց Ակսել**, նշվ. աշխատ., էջ 76:

<sup>14</sup> Նշվ. աշխատ., էջ 80:

որսն ու անտառապահի ծեծը նախորդում են հնձանում Սոնայի և Դիլանի հանդիպման տեսարանին: Այս անգամ Սոնան իջնում է տան շենից և մտնում հնձան, որտեղ Դիլանն իր գործով էր զբաղված: Սկզբում Դիլանը նախատում է Սոնային հնձան գալու և լաց լինելու համար: Այստեղ հերոսի մեջ բարոյականն է խոսում, իշխող բարքերը, սակայն միևնույն ժամանակ սիրտն այլ բան էր ասում: Նա անխոս մոտենում է Սոնային և ամուր գրկում: Նրանք չեն կարողանում զսպել արցունքները: Սոնան Դիլանին խորհուրդ է տալիս ամուսնանալ և արագորեն անհետանում է:

Սոնան գնում էր մերթ դանդաղ, մերթ արագ, գնում էր ու կանգ էր առնում, հետ էր նայում ու կրկին շտապում հեռանալ:

Եթե Բակունցն իր պատմվածքում շեշտում է Սոնայի ամուսնության սոցիալական ասպեկտը, ապա Մաթևոսյանը, ընդհակառակը, այդ հարցին սոցիալական երանգավորում չի տալիս: Սոնան ամուսնացած է իր նման հասարակ աշխատավոր գյուղացու հետ: Եթե Բակունցի ստեղծագործության մեջ սերն է թևածում, ամեն ինչ եթերային է, գեղեցիկ ու բանաստեղծական, ապա Մաթևոսյանի մոտ առօրյայի հզոր ձեռքի տակ մեռնում է սերը: Երբ խոսում են Դիլանն ու Սոնայի ամուսինը Սոնայի ծանր աշխատանք անելու մասին, Սոնայի ամուսինն ասում է. «-Չի՛ սատկի, Դիլան, թո՛ղ:

- Սատկեց՝ սատկեց,- հենց էնպես ասաց Դիլանը»<sup>15</sup>:

Եթե Դիլանը պարզապես, թեկուզ անգիտակցաբար, ուղղակի ասելու համար է ասում այդ ամենը, ապա Սոնայի «հայացքում չկար ոչ սեր, ոչ քնքշանք դեպի Դիլանը և ոչ էլ առհասարակ կանացիություն»<sup>16</sup>: Այսինքն՝ գյուղական ծանր առօրյան պարզապես կոպտացնում է Սոնային, զրկում նուրբ ու քնքուշ զգայական աշխարհից: Նրա ամուսնու մոտ ևս նկատվում են գյուղական կոպտության նշաններ: Նա ուզում է կնոջից ազատվել, «փոխել կնոջը», քանի որ նա ոչնչի ընդունակ չէ, շատ է տրտնջում: Իսկ Դիլանի այն երկիմաստ հարցին՝ «ե՞րբ», ամուսինը պատասխանում է. «-Խոտերը բերեն վերջացնեն»<sup>17</sup>:

Այստեղ հեղինակը ցանկանում է ընթերցողի ուշադրությունը հրավիրել կնոջ նկատմամբ վերաբերմունքի վրա: Կինն ասես միայն ծառայում է որպես օգնող ուժ, գործի, հոգսի մի մասն իր ուսերին վերցնող մեկը:

Այստեղից պարզ երևում է, որ Մաթևոսյանի հերոսները կոպիտ են, կոշտ, բայց և նրանց կոպտությամբ է հեղինակը պատկերում կյանքի առօրեականությունը և կոպտության ֆոնի վրա ավելի տեսանելի է բացահայտում նրանց ներաշխարհը, հոգեկան ապրումները: Իսկ Բակունցի հերոսները երազկոտ են, եթերային, բանաստեղծական: «Մաթևոսյանի համար գեղեցիկի չափանիշը սիրո և բարոյականության միասնությունն է (տվյալ համատեքստում), Բակունցի համար՝ գեղեցիկի չափանիշը սերն է»<sup>18</sup>:

<sup>15</sup> *Մաթևոսյան Զրանտ*, նշվ. աշխատ., էջ 27:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 27:

<sup>17</sup> *Մաթևոսյան Զրանտ*, նշվ. աշխատ., էջ 30:

<sup>18</sup> Մաթևոսյանական ընթերցումներ (հոդվածների ժողովածու) 2, Երևան, 2011, էջ 183: Մեջբերումն արված է Անահիտ Անտոնյանի «Զրանտ Մաթևոսյանի «Այս կանաչ-կարմիր աշխարհը» կինովիպակը» հոդվածից:

Որոշ ժամանակ անց Սոնան մահանում է: Նրա գերեզմանափոսը Դիլանն է միայնակ փորում, որից նույնիսկ չի կարողանում դուրս գալ...

Ինչևէ, կյանքը, միևնույնն է, շարունակվում է. Սոնայի ամուսինը երկրորդ անգամ է ամուսնանում, Դիլանը ևս ամուսնանում է, սակայն ամուսնանում է պարզապես այդ քայլն անելու համար:

Ու կրկին աշուն... Այստեղ ևս հակամիտվում են հեղինակների տեսակետները: Եթե Մաթևոսյանն առաջ է քաշում կյանքի շարունակականության գաղափարը, ապա Բակունցի մոտ ամեն ինչ հեռավոր անցյալում է, բայց կա մի բան, որը թույլ չի տալիս Դիլանին անցածը հանգիստ թողնելու, ներկայով ապրելու, քայլելու կյանքին համընթաց. դա հիշողությունն է, որ «հավիտյան անջինջ» իր խորին խորքերում է ամփոփում մարդկանց և ապրած կյանքի ու անցյալի վերհուշը. «Հնձանի առաջ նստել էր Դիլան դային, գլուխը խոնարհել կրծքին ու միտք էր անում արևի տակ՝ անցած-գնացած օրերի մասին»<sup>19</sup>:

Ժամանակն իր ազդեցությունն էր ունեցել նաև Դիլանի վրա: Նա այլևս այն առույգ երիտասարդը չէր, զառամյալ էր, քայլում էր՝ փայտին հենվելով, լավ չէր տեսնում... Եվ միայն բնությունն էր անխոնջ իր հունով հոսում: Եվ հենց այդ բնությունն էր, որ Դիլանի «հիշողության խավար անդնդում» ճառագեցրեց այն օրը, երբ Սոնան առվակի մոտ ծիծաղում էր: «Ապա միտքը սահեց, արահետով անցավ դեպի անտառը: Միրհավ կար անտառում, թռավ արնակուլով, երկու փետուր թողեց փափուկ մամուռների վրա»<sup>20</sup>: Միրհավի պես թռավ Սոնան՝ իր հետևից թողնելով երկու փետուր՝ «տխրություն և դառնաթախիծ հուշեր»<sup>21</sup>:

Մինչդեռ Մաթևոսյանի մոտ կյանքը ոչ մի դեպքում կանգ չի առնում, ինչ էլ լինի, այն անարգել գնում է առաջ, հնի տեղ նորն է գալիս, նախորդին գալիս է փոխարինելու հաջորդը, փոխվում են ժամանակները, փոխվում են ընկալումները, փոխվում են նույնիսկ մարդիկ: Մաթևոսյանը զուգահեռներ է անցկացնում Դիլանի կյանքի մայրամուտի և, առհասարակ, կյանքի հարատևման միջև: Դիլանն ասես սահմանափակված է իր բնությամբ, ասես կյանքն իր կողքով է անցնում, անվերջ զարգացող աշխարհ՝ ինքնաթիռներ, հեծանիվներ, անաղմուկ քաղաք, ջրանցք, բեռնատար ավտոմեքենաներ, բետոնե կառույցներ, և այդ ամեն ինչի ընթացքը լուռ է, անաղմուկ: «Աշխարհը կարծես ընթանում է ապակու ետևում»<sup>22</sup>: Իսկ նա լուռ է, լուռ ու մենակ՝ իր հիշողությունների, իր հին սիմֆոնիկ խշրտոցի, իր հարյուր տարվա ջահել կյանքի ցածր ու հին հարսանեկան երգի հետ:

Իսկ դրսում բնության հարափոս ու անկանգ ընթացքն է...

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Բակունց Ակսել**, Երկեր, Երևան, 1986:
2. **Մաթևոսյան Հրանտ**, Ես ես եմ, Երևան, 2005:
3. **Մաթևոսյան Հրանտ**, Տերը: Կինովիականեր, Երևան, 1983:

<sup>19</sup> **Բակունց Ակսել**, նշվ. աշխատ., էջ 80:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 80:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 80:

<sup>22</sup> **Մաթևոսյան Հրանտ**, նշվ. աշխատ., էջ 34:

4. Մաթևոսյանական ընթերցումներ (հոդվածների ժողովածու) 2, Երևան, 2011:

**ПОПЫТКА СРАВНИТЕЛЬНОГО АНАЛИЗА РАССКАЗА АКСЕЛА БАКУНЦА  
"ФАЗАН" И КИНОПОВЕСТИ ГРАНТА МАТЕВОСЯНА "ЭТОТ ЗЕЛЕНО-КРАСНЫЙ МИР"**

**А. Э. МКРТЧЯН**

В статье проводятся параллели между рассказом Аксела Бакунца "Фазан" и киноповестью Гранта Матевосяна "Этот зелено-красный мир".

**COMPARATIVE ANALYSIS OF HRANT MATEVOSIAN'S FILM-NOVEL  
"THIS GREEN-RED WORLD" AND AKSEL BAKUNTS'S STORY "PHEASANT"**

**Н. Е. MKRTCHYAN**

Parallels are drawn between Aksel Bakunts' story "Pheasant" and Hrant Matevosian's film-novel "This green-red world" showing the similarities and differences of these works.

**СИНТАКСИЧЕСКИЕ ФРАЗЕОЛОГИЗМЫ, ВЫРАЖАЮЩИЕ  
ОЦЕНКУ, ХАРАКТЕРИСТИКУ  
В РУССКОМ И АРМЯНСКОМ ЯЗЫКАХ**

**А. М. МУХСИХАЧОЯН**

*Кандидат педагогических наук, доцент ГГУ,  
зав. кафедрой русского языка и литературы ГГУ*

Сопоставительное изучение нами синтаксических фразеологизмов (СФ) в русском и армянском языках позволило дать в предыдущей статье относительно полное их описание.

В настоящей статье предпринята попытка выявления списка синтаксических фразеологизмов, выражающих оценку (характеристику), согласие/несогласие не только в русском, но и в армянском языке, и, соответственно, представление их сравнительного анализа, то есть насколько и в каком количестве синтаксические фразеологизмы в русском языке соответствуют (на всех уровнях языка) синтаксическим фразеологизмам в армянском языке и с чем связано их несоответствие.

По ходу работы над материалом сразу стало очевидно, что синтаксические фразеологизмы в армянском языке, практически, отдельно не исследовались. Очевидно было и то, что употребляются они в основном в разговорном стиле речи, поэтому труднее было и подбирать соответствующие примеры из армянской художественной литературы. Однако, примеры исследуемых СФ были выявлены в произведениях Дереника Де-